# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | Կրծքանշանն իրենից ներկայացնում է օվալաձև` ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը` սպիտակ: Կրծքանշանի երկարությունը 60 մմ է (շեղումը` +/- 1մմ), իսկ միջնամասի լայնությունը` 45 մմ (շեղումը` +/- 1մմ): Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում` կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրապետության դրոշը: Կրծքանշանը եզրագծված է 10 մմ (շեղումը` +/- 1մմ) լայնությամբ արծաթագույն դափնեպսակով: Կրծքանշանի միջնամասում` ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատկերված է Հայաստանի Հանրապետության ծածանվող դրոշը: Կրծքանշանի կենտրոնում` դրոշի վրա, 30 մմ (շեղումը` +/- 1մմ) տրամագծով կանաչ ֆոնի վրա պատկերված է շրջանակ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», ներքևի հատվածում՝ «ՓՐԿԱՐԱՐ» բառերը: Շրջանակի կենտրոնում գտնվող 20 մմ (շեղումը՝ +/- 1մմ) տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կանաչ շրջանակում զետեղված է արծիվ և ութաթև աստղ: Արծվի և շրջանակի եզրագծի ներքևի հատվածում գրված «ՓՐԿԱՐԱՐ» բառի միջնամասում նշված է հռոմեական «II» թիվը: Կրծքանշանի դարձերեսին լազերային եղանակով դաջվում է կրծքանշանի հերթական համարը /սկսած 001-ից/: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանի արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է կրծքանշաների բարձր որակը և ճշգրիտ չափսերը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը պետք է լինի ոչ ավել քան 0.1 մմ: Պատրաստի կրծքանշանի վրա չի թույլատրվում՝ Պատկերների և գրվածքների աղավաղում: Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը կրծքանշանների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ШИН ЛИДЕР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | |